

“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԴ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1903

ԹԻՒ 4

ԹԵՅԻ ՄԵՆ ԵՐԿԻՐԸ
 Բոլոր միւս երկիրներէն աւելի թէյ
 յի երկիր է Չինաստան, բայց ոչ այն
 աստիճան, ինչպէս էր ասկէ քսանը-
 հինգ տարի առաջ: Բրիտանացիք շատ
 թէյ կը խմեն, և այդ ժամանակ ի-
 րենց գրեթէ ամբողջ

թէյը Չինաստա-
 նէ կը գնէին: Բայց
 Չինական թէյերը
 ստորնացան յատ-
 կութեամբ, վասնզի
 թէյ մշակողները
 հետզհետէ անփոյթ
 և խարդախ եղան,
 ուստի Անգղիացիք
 սկսան իրենց թէյը
 Հնդկաստանէ եւ
 Սէյլանէ բերել, և
 այս բանը զրգիւ մը
 եղաւ որ այդ երկիր-
 ներուն մէջ առա-
 տութեամբ մշակուի
 այդ բոյսը: Բայց
 Ռուսերը յաջորդե-
 ցին Անգղիացուոց
 իբրև յաճախորդ Չի-
 նացի թէյ մշակող-
 ներուն: Թէյը ցա-
 մաքէն կը տար-

ուէր Սիպերիոյ ճամբով մինչև Սուէ-
 ղի ջրանցքին բացումը, որմէ ետքը
 կամաց կամաց սովորութիւն եղաւ
 ղրկել զանիկա Օտէսա շոգեհասով:
 Թէյի վաճառականութեան մեծ կեդ-
 րոնն է Եանցեքեանկ գետին հովիտը,
 մանաւանդ Հանքաու քաղաքը: Օ-
 տարազդի վաճառականները հոն
 իբր վեց շաբաթ միայն կը կենան,
 Մայիսէն սկսելով մինչև Յունիսի մէ-
 ջերը: 1896ին այդ նաւահանգիստէն
 նաւ դրուեցաւ 20,000,000 քաջէ ա-
 ւելի տերև թէյ, որ աւելի ազնիւ է,

և գրեթէ նոյնչափ ալ աղիւս թէյ
 կոչուածը, որ կը պատրաստուի ճրն-
 շելով ստորին թէյը: Թէյի պար-
 աէզները, զորոնք կը ցուցնէ այս պատ-
 կերը, փոեանկ լծին մտակայ երկ-
 րին մէջ են Եանկցեքեանկի հո-

կա որ ինք չխառնուի գործին: Դպրո-
 ցի տեսուչները կ'ուզէին որ ղինե-
 տունը կա՛մ փակուի, կա՛մ ուրիշ
 տեղ մը տարուի: Քաղաքապետը եր-
 կու կողմին ալ փաստերը լսելէ ետքը
 ըսաւ, “Ես կ'ուզեմ որ դպրոցին



տղաքը ըսեն ինծի
 թէ ինչ կը խորհին
 անոր համար: Ին-
 ծի ղրկեցեք.” ըսաւ
 դպրոցի տնօրէնին,
 “հինգ վեց տղաք
 ձեր ամէնէն փայ-
 լուն աշակերտնե-
 րէն: Ես անոնց ալ
 պիտի հարցնեմ.”
 Յաջորդ օրը հինգ
 վեց տղաք տասնէ
 մինչև տասներկու
 տարեկան, քաղա-
 քապետին ներկա-
 յացան: Տղոց ամէն
 մէկը յառաջ բերաւ
 փաստ մը թէ ինչո՛ւ
 կը կարծէր թէ գի-
 նետունը պէտք էր
 վերցնել անկէ, մին-
 չև որ կարգը եկաւ
 վերջինին, որ տաս-
 ներկու տարեկան

վիտին մէջ, որ Հանքաուի չափ
 վեր չէ:


ՏՂՈՒ ՄԸ ԽՕՍԻՐԸ

Փէթրիք է. Բոլինս, որ անցեալ բա-
 ւական տարիներուն մէջ Պոսթընի քա-
 ղաքապետ եղած է, կը հաւատայ թէ
 տղու մը խօսքը կ'արժէ լսել: Մօտերս
 անոր գանգատ եղաւ թէ գինետուն
 մը շատ մօտ կը գտնուէր Ժողովրդա-
 յին դպրոցի մը: Քաղաքապետները
 և ուրիշներ որոնք ալէկ կը սեպէին
 անոր բաց մնալը, յորդորեցին զանի-

պատիկ մըն էր: Ասիկա ուղղակի քա-
 ղաքապետին աչքին մէջ նայեցաւ, և
 իր փաստը յառաջ բերաւ սապէս.
 “Իմ դպրոցս ինծի յոյս կու տայ օր
 մը Պոսթընի քաղաքապետ ըլլալու.
 գինետունը չկրնար տալ աստանկ յոյս:
 կարծեմ մենք տղաքս բոլոր ջանքով
 աշխատելու ենք քաղաքապետ ըլլալ:
 Ասիկա է բոլոր գիտցածս ասոր վրայ.”
 Քաղաքապետը ետ նետուեցաւ իր
 աթոռին մէջ և բարձրաձայն խնդաց,
 յետոյ շտկուելով ըսաւ վերջին խօ-
 սողին. “Տղաս, դուն բոլոր քաղաքա-

գէտներէն և վարժապետներէն աւելի զօրաւոր խօսեցար : Այդ գինետունը իսկոյն պիտի դադրեցնէ իր գործը :

Տղաքը քաղաքապետին համար սրտազին կեցցէ մը աղաղակեցին և պաշտօնարանէն դուրս ելան : Յաղթանակ կանգնած էին և ուստի երջանիկ էին և յաղթական :



ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՇՏԱՐԱՎԿ ԵՒ ԱՍԾ ԿԱՏՈՒՆ ԻՆՉՊԵՍ ԱԶԱՏՈՒԵՑԱԻ

Ամառուան գեղեցիկ իրիկուն մը ճամբաները լեցուած էին եկեղեցի գացող բազմութիւնով : Քանի մը հոգի անկիւն մը կայնած և իրենց աչքերը տնկած դէպի օդը կը նայէին, Շուտով ուրիշներ ալ անոնց միացան, մինչև որ այնքան մեծ ամբոյս մը հաւաքուեցաւ, որ ճամբան գոցուեցաւ : Շուտ մը փողոցին բոլոր պատուհանները մարդոց գլուխներով լեցուեցան, և մօտակայ տուններուն տանիքներուն վրայ մարդիկ տեսնուեցան : Եւ ի՞նչ կը կարծէք թէ էր պատճառը : Սև կատու մը եկեղեցւոյ բարձր զանգակատան մէկ ցցուած զարդին փաթթուեր էր իր սիրելի կեանքը աղատելու համար : « Ի՞նչ պէս ելեր էր հոն », եղաւ առաջին հարցումը զոր կ'ընէր ամէն մարդ : « Ի՞նչպէս վար պիտի իջնայ », եղաւ երկրորդ հարցումը : Խեղճը վար կը նայէր, և յաճախ ողորմելի կերպով կը ճուար, իբր թէ վարը գտնուած բազմութենէն օգնութիւն խնդրելով : Անգամ մը աշտարակին գահավէժ կողմէն վար սահեցաւ քիչ մը տեղ, և ամբոյսէն գթութեան աղաղակ մը բարձրացաւ : Բարեբաղդապէս կատուին ճանկերը ուրիշ ցցուած ծայրի մը կառչեցան, և այսպէս այդ վայրկեանին ապահով էր դիտողներէն մէկը խորհուրդ տուաւ զարնել զանիկա, որպէս զի կենդանին աղատուէր աւելի սոսկալի մահէ մը որ կը թուէր թէ կը սպասէր անոր :

Բայց ոչ մէկը ուզեց հրազէն պարպել : Շատ չանցած տեսնուեցաւ որ բացուեցաւ փոքրիկ պատուհան մը, քիչ մը վերև այն տեղին ուր կատուն կառչած էր : Երկու տղաք որոշեր էին զանիկա աղատել : Անոնք սանդուղի աստիճաններէն վեր ելեր էին հոն ուր զանգակը կախուած էր : Այնուհետև սանդուղով մը հասան պատուհանին : Եւ ահա տեսնուեցաւ որ տղաքը կողով մը իջեցուցին աշտարակին քովէն : Կատուն ուշադրութեամբ կը դիտէր մինչ կողովը կամաց կամաց իրեն կը

մօտենար : Երբ կողովը բաւական մօտեցաւ, զգուշութեամբ երկնցուց իր մէկ թաթիկը և բռնեց կողովին քովէն, յետոյ նոյնքան զգուշութեամբ կրկնեց նոյնը իր միւս թաթիկով, յետոյ ուժով մը նետուեցաւ կողովին մէջ և տեղաւորուեցաւ անոր յատակը : Ապահովապէս քաշուեցաւ պատուհանին առջև վարը սպասող հանդիսատեսներուն բարձրածայն կեցցէներուն և ծափահարութիւններուն մէջտեղ :



ԶՕՐԱՎԱՐ ՏԻԱԶ

Մէքսիքոյի Հանրապետութիւնը Գերմանիոյ, Գաղղիոյ և Աւստրիոյ չափ մեծ

պնակները չորրորցի և պէպէքին հոգտարի, երկու օրէն ալ դպրոցը պիտի սկսի և այն ատեն պիտի ստիպուիմ ձանձրալի դասեր սորվիլ, չուզած ատենս պառկիլ և առտուն կանուխ ելիլ : Առտունէ մինչև իրիկուն լսածս սա է, Շուշան սա ըրէ, Շուշան, նա ըրէ, և միշտ ընել չուզած բաներս կ'ըսեն, և ուզած բաներս չեն ըսեր : Ո՛հ, երանի՜ թէ հիւանդանայի թեղևս այն ատեն պիտի զղջային, խորհելով որ ինձի այնչափ գործ ընել կու տային, և երբ մէկը մոռնայի, կը յանդիմանէին : Բնաւ չեմ յիշեր որ երբէք հիւանդացած եմ, բայց երբ



է և բնակիչներուն թիւն է գրեթէ 14,000,000 : Հարուստ է հանքերով և ունի ընդարձակ և պատուական անտառներ, և վերջին քսան տարիներուս մէջ արագ արագ յառաջացաւ յաշտութեան մէջ : Դաստիարակութիւնը հիմա ձրի է և պարտաւորիչ : Խնողքի մը թոյլ չտրուի իր զաւակները առանց դաստիարակութեան մեծցնել : Շատ մը նոր երկաթուղիներ շինուած են և երկրին արտադրութիւններուն համար վաճառանոցներ գտնուած են : Եւ այս յառաջդիմութիւնը եղած է երկրին կարող նախագահին, Զօրփորձիթիօ Տիագիի, վարչութեան ներքև, որ հիմա 75 տարեկան է, և 25 տարիէ ի վեր նախագահի պաշտօն կը վարէ :



ՄԻԱԱՍԾ ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿ ՄԸ «Ո՛հ, հառաչեց Շուշան, շատ յոգնած եմ. աղիւն անդին զրկուեցայ,

վարդուհի հիւանդ էր, ամենալաւ սենեակին մէջ կը պառկէր և ամէնէն գեղեցիկ պնակներուն մէջէն ամենալաւ բաները կ'ուտէր և ամէն մարդ զինքը կը սիրէր : Մայրիկը զինքը «Սիրելիս» կը կոչէր և հայրիկը «Զաւակս» Ո՛հ, հիւանդ ըլլալը ինչպէս լաւ բան մը ըլլալու է :

Գիշեր մը Շուշան իր սաստիկ ցաւող գլխուն շոյուիլը զգաց իր մօր փափուկ ձեռքովը : Բան մը ըսելու ջանք ըրաւ, բայց իր կողորդը այնպէս անհանգիստ էր որ փոխանակ խօսելու տարօրինակ ձայն մը հանեց : Մէկուն հառաչելը լսեց և մօտիկ ընելով տեսաւ որ ան ձայնը հանողը բուն ինքն է եղեր որ շատ մը նեղիչ ցաւերու ենթարկուած ըլլալով տեղ մը հանգիստ գտնելու կարող չէ :

Ասոր հետևեցան օրեր որոնց մէջ Շուշանին սենեակին փեղկերը միշտ գոց

կը պահուէին, իր գլխուն վրայ սառ կը դրուէր և ամէն ժամ տհաճերի դեղ մը խմելու ստիպուած էր: Մօրը պատրաստած ապուրը համ չունէր, աղուոր կարմրած հացը իր կոկորդը կը ցուցնէր:

Ոչ մի բան աղէկ էր:

Վերջապէս օր մը եղաւ որ բարձելու օգնութեամբ անկողնին մէջ նստելու կարողացաւ: Տունը շատ հանդարտ էր. միայն հայրը, մայրը և բժիշկը կը մտնէին Շուշանի սենեակը: Մայրը ըսաւ իրեն թէ Վարդուհի և երկու պզտիկները իրենց մեծ մօրը տունը զրկուած էին, որ չըլլայ թէ Շուշանի հիւանդութիւնը անոնցալ փոխադրուի: Երբ բաւական աղէկցաւ, տան հակա նեխմանէն վերջը տղաք տուն վերադարձան:

Որչափ ուրախ էր Շուշան որ դարձեալ աղէկալով կարող էր իր մօրը քիչ մը օգնել ի փոխարէն այն բոլոր նեղութիւններուն և դժուարութիւններուն զորս իր հիւանդութիւնը պատճառած էր:

Երբ այն գիշերը մայրը իր քով եկաւ վերմակը ծածկելու համար, Շուշան սապէս փափսաց իր մօրը ականջին, «Մայրիկ մեր երկնաւոր Հօրմէն խնդրեցի որ ներէ ինձի հիւանդ ըլլալու փափաքելուս համար, և օգնէ ինձի որ այսուհետև ինչ որ ըսես Զիշ հիմակուան պէս ուղեւ ընեմ»:


Միխայիկ ԳԱՐՄԱՆԻ ԵՄՍԵԱՆ




ԼԻՆՔԸՆ ԵՒ ԹՈՂՈՒՆԻ ՁԱԳԵՐԸ

Հետագայ միջոդէպը կը պատմէ Մր. Սփիտ իր մտերիմ բարեկամին, Ամերիկայի նախագահ Լինքընի, վրայ: «Անոր սիրտը շատ փափուկ էր և շատ կը մեղքընար երբ տեսնէր մէկը նեղութեան մէջ, անկա թէ՛ մարդ ըլլար թէ՛ չորքոտանի թէ՛ թռչուն: Իր փափուկ, ազնիւ և համակրալից բնութիւնը որ ծաղկած էր գեղեցկապէս այն խոնարհ քաղաքացիին մէջ, իր տունը գտնուած ատենը, պտղաբերեց ախարհի արևի լոյսին մէջ երբ ինք բարձր գիւղի և իշխանութեան հասաւ: Դաշտագետններուն մէջ իր տունէն իրեն հետ Ուաշինկթըն տարաւ բնակարանութեան միւնոյն ազնուութիւնը և սրտի քաղցրութիւնը: Վեց հոգի, որոնց մէջ կը գտնուէինք Լինքըն, Հարտին և ես, կ'երթայինք դաշտային ճամբէ մը երկու երկու: Անցանք վայրի սալրեների և խնձորենիի անտառէ մը: Սաստիկ փոթորիկ մը պատահած էր: Լինքըն և

Հարտին ետէէ կու գային: Ճամբուն մէկ քովը թռչունի երկու ձագեր կային, այնքան պզտիկ որ չէին կրնար թռչիլ: Փոթորիկին ատենը բոյնէն դուրս նետուած էին: Մայր թռչունը կը թռչտէր անոնց բոլորտիքը և կ'ողբար ինչպէս մայր մը կ'ողբայ իր պզտիկներուն համար: Լինքըն կեցաւ, ձին կապեց, առաւ թռչնիկները, փնտռեց դտաւ բոյնը և զանոնք անոր մէջ դրաւ: Մնացածներս շուրի մը քով հասանք. և մինչ մեր ձիերը կը խմէին, Հարտին եկաւ: «Ո՛ր է Լինքըն», հարցուց մէկը: «Ո՛հ, երբ վերջին անգամ տեսայ զանկա, ձեռքը թռչունի երկու ձագ ունէր և անոնց բոյնը կը փնտռէր», թերևս ժամ մը ետքը եկաւ: Մենք խնդացինք



Վրան: Լինքըն ըսաւ զօրաւոր շեշտով մը, «Պարոններ, կրնաք խնդալ. բայց ես չէի կրնար հանգիստ քնանալ այս գիշեր, եթէ այն թռչնիկները չազատէի: Անոնց աղաղակը իմ ականջներուս մէջ պիտի գոռային»:



Ե. Ք. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԾԵՆՔ ՍՅՈՒՅՈՒՄԻ ՄԵՁ
Համակրանքը զոր Շուէտի Սթոքհոլմ մայրաքաղաքի ժողովուրդը կը գգայ Ե. Ք. Ընկերակցութեան հանդէպ, կը ցուցնէ այս շքեղ շէնքը, զոր անոնք կառուցին յիշեալ Ընկերակցութեան համար: Ընկերակցութիւնը «հիմա ճանչցուած է իբրև քաղաքին յառաջիմական կեանքին հզօր ազդակներէն մին»: Անոր սրահներէն քանի մը հատը զարդարուած են թագուհոյն երկրորդ որդւոյն, տեսչութեան ներքև: Ուրիշ մէկ որդին, Պէրնատթ իշխան, նախագահն է ընկե-

րակցութեան Շուետական մասնաճիւղին, և ջերմ ջատագով գործին:

ԼՈՅՏԻ ԲԱՂԴԸ

Երբ Լոյտի հայրը ըսաւ անոր թէ ագարակը ծախած էր և թէ իրենք ամառը դուրսը վրաններու մէջ պիտի անցնեն, Լոյտ շատ ուրախ եղաւ: Անոր հայրը և ուրիշ երկու հոգի ընկերութիւն մը կազմած էին և ամառը հանք գործելով պիտի անցընէին: Անոնք գնեցին իրենց պարէնները և հանքի գործիքներ, և զանոնք երկու կառքի մէջ բեռնեցելով ճամբայ ելան: Մէկ կառքին մէջ էին Լոյտի հայրը, մայրը և Լոյտ, նաև իրենց պարէնները, և միւսին մէջ էին երկու ընկերները և բրիչները, փայտատները, ոսկիի ամաններ և անտուկ շինելու համար տախտակներ և խարբաքներ (մաղ):

Երբ քանի մը օր ճամբորդելէ ետև հասան այն տեղը ուր խորհած էին աշխատիլ, մարդիկը ծառեր կտրեցին և մէկ շարթուան մէջ կոծղերէ տնակ մը շինեցին: Ս.յդ տեղը գործուած էր երկար ժամանակ առաջ, երբ ոսկի առաջին անգամ գտնուեցաւ Քալիֆորնիոյ մէջ, բայց շատ խոր փորուած չէր: Լոյտ կը սիրէր դիտել երբ մարդիկը հողը և տիղմը անտուկներուն մէջ կը լեցնէին, և տեսնել երբ արագ վազող աղմուտ շուրը կը քչէր ժայռի կտորները և խիճերը միւս կողմէն: Անոնք տեսան որ տիղմը շատ հարուստ չէր, և քանի մը օր յետոյ երբ մնացած գիրտը գտեցին, հասկան թէ շատ քիչ ոսկիի փոշի կար, կէս ունկիէն պակաս ամբողջ օրուան մը աշխատութեան դէմ:

Լոյտ չուտով ճանճրացաւ մարդոց աշխատութիւնները դիտելէ. կ'ուզէր որ ինք անձամբ ընէր ոսկի հանելու ամբողջ գործ մը: Ուստի հայրը իրեկուն մը իր գործը լմնցնելէն ետքը անոր խարբալ մը շինեց անտուկի բարակ թեթև տախտակներէ, և Լոյտ ամէն օր կը խաղար հանքահանի նմանելով: Վերջը իր խարբալը շուրի հասանքին վերի մասին քով տարաւ գրեթէ մէկ քառորդ մը զան հեռու այն տեղէն ուր իր հայրը կը գործէր: Գործաւորներէն մէկը անոր պոռացեր էր, «Եյ, ո՛ր կ'երթաս»: Լոյտ ետին նայեցաւ, և ըսաւ, «Հոսանքն ի վեր կ'երթամ աշխատելու»: «Բարի յաջողութիւն», պոռացին ետևէն:

Լոյտ շատ բան չգտաւ հոսանքին մէջ, ուստի իր խարբալը տարաւ ցամքած հեղեղատ մը որ դէպի այդ հասանքը կ'երթար: Յաջորդ օրը Լոյտ այն-

քան փորեց որ իր ձեռքերը ուռեցան և կռնակը ցաւեցաւ: փորած էր ծակ մը ուր հողը թաց էր և ջրոտ, այնպէս որ կրնար ջուր առնել իր գործին համար: Երբ հետեւեալ առաւօտ նորէն գնաց հոն, տեսաւ որ ծակը գրեթէ լեցուած էր տղմուտ ջրով որ վազած էր ակէն: Բաւական ջուր կար խարաքը գործածելու համար:

Հեղեղատին ամէնէն ցած մասին մէջ, մօտ այն տեղին ուր խարաքը գործած էր, ժայռ մը դուրս ցցուած էր քանի մը մասնաշափ: Լոյտ չտեսաւ զանկիկ այդ ատեն, բայց կարելի ամէնէն աղէկ տեղը գացած էր ինք: Մակերեսէն քանի մը մասնաշափ վարը ժայռի մը զարնուեցաւ բրինձը: Շատ անկանոն ժայռ մըն էր այն, իր փայտաօր առաւ և քերեց ժայռը, և իր խարաքին քով հաւաքեց փշրանքները: Անոնցմէ փայտատ մը նետեց խարաքին մէջ: Երբ տիրը և փշրանքները անցան խարաքէն, վերցուց մնացածը անոր մէջէն՝ թափելու համար խոշոր փշրանքները և ժայռի կտորները, որոնք խարաքին ծակերէն չէին անցած: Եւ ահա իր նետածներուն մէջ տեսաւ գեղեցիկ քար մը: Ճերմակ էր անիկա և ունէր դեղին պիսակներ: Քանի մը այնպիսի ուրիշ կտորներ ալ գտաւ, և զանոնք դրապանք դրաւ, իր հօրը հարցնելու համար թէ ի՞նչ են անոնք: Չէր գիտեր թէ շատ հարուստ ոսկի պարունակող քուարց քարը գտած էր: Բայց երբ վերցուց խարաքը, և տեսաւ դեղին գիծ մը, հասկեցաւ թէ ոսկեհանքի երակ մը գտած էր: Ոսկեփոշին խոշոր էր, անոր հատիկներէն ոմանք բրինձի մեծութիւն ունէին: Վրանը գնաց և ոսկիի աման մը առաւ, և մաքրեց խարաքը:

Այդ գիշեր երբ մարդիկը տուն եկան ընթերելու, Լոյտի մայրը ըսաւ իր ամուսնին, «Ի՞նչ բրինձ այսօր: Յաջողութիւն մը ունեցա՞ք» Լոյտի հայրը հառաչեց ու ըսաւ, «Ո՛չ, սիրելիս, կը ցաւիմ որ պարսպ տեղ աշխատեցանք, կը վախճամ որ սխալեցանք ազարակը թողելով» «Ի՛հ, Լոյտ, դուն ի՞նչ բրինձ նայինք», ըսաւ հայրը: Լոյտ բերաւ ոսկիի պնակը և գեղեցիկ քարերը և տուաւ իր հօրը: Երբ մարդը տեսաւ ոսկիի անզուտ փոշին և կտորները պնակին մէջ և հարուստ ոսկիի քարերը, լսելու էիք անոր աղաղակը: «Ուրի՞նչ գտար ատոնք», հարցուցին անոնք յօւզուած, սեկուր ցուցուր մեղին: Եւ առաւոյ ընթերի սպասելու գացին տեղը: Լոյտ հազիւ կրնար անոնց հետ քայլել, այնքան արագ կը քայլէին անոնք: Երբ հասան անոր

մաղին, Լոյտ ցուցուց անոնց թէ ուրի՞նչ գտաւ հաներ էր տիրը: Հայրը իր բրինձը առաւ և զարկաւ ժայռին, որ հեղեղատին յատակէն վեր կը բարձրանար: Կտորուած կտորներէն մէկը առաւ և վրան նայեցաւ: Քուարց քարն էր ոսկիի ճոխ երակներով: Իր ընկերներուն տուաւ զանկիկ, և բռնեց Լոյտը և օդին մէջ բարձրացուց ու ըսաւ, «Բաղդերնիս շինուեցաւ: Գուն գտար ոսկի պարունակող այդ ժայռը» Մարդիկը քուարցի կտորներ փշրեցին և յետոյ ծածկեցին ժայռի այդ մասը:

Վրանին մէջ շատ ուշ քնացան մարդիկը այդ գիշեր: Հետեւեալ օրը առնոցմէ մէկը կառքով գնաց ամէնէն մօտ գանուող քաղաքը, բրինձը, փայտատներ և ժայռ պայթեցնող նիւթեր գնելու համար: Հանքին անունը դրին «Լոյտի բաղդը», թէ և հայրիկը ըսաւ թէ զանկիկ պէտք է կոչել «Լոյտի աշխատութեան արդիւնքը»: Վրանի անիկա այնքան սաստիկ աշխատելով գտաւ զայն, Մեծ ընկերութիւններու կողմանէ հանքերու քանի մը մասնագէտներ փորձեր կատարած և հաստատած են թէ առիկա շատ պատուական գիւտ է: Եւ իրօք այնքան պատուական՝ որ ամիս մը ետքը Լոյտի հայրը, որ արդէն զգացած էր թէ հանքահանի վրանաբնակ կեանքը շատ բիրտ կեանք է իր կնոջ համար, իր բաժինը իր երկու ընկերներուն ծախեց և Լոյտի և անոր մօր հետ իրենց ազգականները ձաւ, զոր հիմա կարող էին այնպէս վարել ինչպէս երբեք վարած չէին, և Լոյտ գոյժ զրկուեցաւ գոյժ մտնելու չափ մեծնարուց պէս:

ՀԵՐԱԿԼԷՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Երբ Հերակլէս տասներկու տարեկան գեղեցիկ պատանի մըն էր, զըրկուեցաւ իր բնաւ չսիրած մէկ գործը կատարելու: Ճամբան կամաց կամաց քարած ատենը, իր սիրտը լեցուած էր շատ մը դառն խորհուրդներով և կը արածըր որ ուրիշները իրմէ աւելի աղէկ և հանգիստ կեանք մը կ'անցնէին մինչ իրեն համար աշխատութենէ և ցաւէ պատուաբէր բան մը չկար: Այս բաներուն վրայ խորհելով իր ճամբան կը շարունակէր, և ահա յանկարծ տեղ մը հասաւ ուր երկու ճամբանք իրարու կը միանային, կանգ առաւ և չէր գիտեր թէ որու հետեի:

Իր աջ կողմի ճամբան քարոտ ու բլրային էր և բոլորովը բնաւ գեղեցիկութիւն չկար: Բայց տեսաւ որ ուղղակի կը տանէր հեռուոր կապուտակ լեռները: Իսկ իր ձախ կողմի ճամբան լայն և հարթ էր, երկու կողմէն հովանաւոր ծառերով չըջապատուած, որոնց վրայ հազարաւոր գեղեցիկ թռչուններ կ'երգէին, և որուն ընթացքով կը յառաջանար պուրակներու և դաշտազգեղ մարգագեղ տիններու մէջէն, ուր անհամար ծաղիկներ կային, բայց կը վերջանար մէ-

գի և մառախուղի մէջ դեռ կապուտակ և հրաշալի լեռները չհասած:

Մինչ պատանին կը մտածէր թէ ո՞ր ճամբան հետեի, տեսաւ երկու օրիորդներ որ դէպ իր կողմը կու գային, իւրաքանչիւր տարբեր ճամբէ: Առաջին անգամ իրեն քով եկաւ ան որ ծաղկաւետ ճամբէն կու գար, և Հերակլէս տեսաւ որ անիկա ամառանային օրուան մը պէս գեղեցիկ էր: այսերը կարմիր էին, աչքերը փայլելուն, և ձայնը առտուան երաժշտութեանը կը նմանէր:

«Ո՞վ ազնիւ պատանի, այս է քու ընտրելիք ճամբադ», ըսաւ: ասիկա քեզ պիտի առաջնորդէ հաճոյալից տեղերու մէջէ, ուր ո՛չ աշխատութիւն կայ, ո՛չ ուսման պարսպում և ո՛չ ալ ունէ նեղութիւն: Քու ականջներդ պիտի լեցուին ախորժիւի և անուշ ձայներով, և դուն ունէ բանի պէտք պիտի չունենաս, այլ պիտի վայելու անցնող ժամերը»:

Այն ատեն միւս գեղադէմ օրիորդը քովը եկաւ և սկսաւ սապէս խօսիլ, «Եթէ դուն իմ ճամբուս հետեւիս, զանկիկ դրսուանց խորտուրտ պիտի գտնես և պէտք է որ մազլցիս շատ մը բլուրներէ վեր և իջնես ձորերէ վար: Չորերը շատ մթին են, իսկ բլուրներուն գագաթները վեհ և փառաւոր: այս ճամբան քեզ պիտի առաջնորդէ հեռուոր կապուտակ լեռները, որոնց չես կրնար հասնիլ առանց աշխատութեան: Եթէ կ'ուզես ունէ նալ պատուներ և ծաղիկներ, պէտք է որ դուն անկես զանոնք և հող տանիս անոնց: Եթէ կ'ուզես որ քու ընկերներուդ սէրը չահիս, պէտք է որ սիրես զանոնք և նեղուիս անոնց համար»:

Այն ատեն Հերակլէս «Ի՞նչ է քու անունդ», հարցուց այն օրիորդին որուն գէմքը շատ գեղեցիկ կ'երևէր իրեն, արշալոյսի մը նման և ամառանային անձրևէ մը ետքը ծաղկաւետ դաշտերուն պէս:

«Ոմանք դիս Աշխատութիւն կը կոչեն և ոմանք Ճշմարտութիւն», պատասխանեց օրիորդը:

«Ի՛նչ է քու անունդ», ըսաւ Հերակլէս, առաջին օրիորդին դառնայով: «Ոմանք դիս Հաճոյք կը կոչեն», ըսաւ օրիորդը ժպտալով մը, «բայց ես աւելի կ'ընտրեմ Չուարթ կոչուիլ»:

«Աշխատութիւն», ըսաւ Հերակլէս, «ես պիտի հետեւիմ քու ճամբուդ և կ'ուզեմ աշխատասէր ըլլալ, և սիրելի իմ ընկերներուս: Կապուտակ լեռները հասնիմ թէ չհասնիմ, կ'ուզեմ ունենալ սա համոզումը թէ իմ ճամբորդութիւնս օգտակար նպատակ մը ունի»:

Թորք: Ա՛հէ: ՉԱՐԿԱՍ Ս. ՉԱՐԿԱՍ

Տարեկան բաժանորդագին՝ 6 դր. արծաթ: Կանխիկ, ամէն տեղոյ համար: Ամերիկայի Միտիոնարայ Ընկերութեան կողմէն Արտօնատէր Ճ. Ք. ԿՐԻՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԳՈՏՏԱՆԴԵՆՈՒԹՅՈՒՆ
ՅԱՐԱՐԱՆ և ՑՈՒՌԱ ՊՅՈՒՆՆԵՐ
Ֆինանսները Խօգուշու, Ամերիկան Խան